ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՍԻՍԻԱՆԸ ԿՔՎԵԱՐԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՕԳՏԻՆ:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 1 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 23.08.2012թ.:

Թողարկում՝ Սիսիանի տարածաշրջանի ընթերցողների համար:

®

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ

№ 20 (261)

ԱՅՑԵԲՈՒՄ

Հաղթելու ենք, կարգուկանոն ենք հաստատելու, աշխատելու եւ ապրելու ենք միասին ու մարդավարի

ՏԻԳՐԱՆ ԼԵԳԴԱՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Ծնվել է 1968-ին: Սովորել է Սիսիանի N3 միջնակարգ դպրոցում: 1984-88թթ. սովորել է Աբովյանի ավտոճանապարհային տեխնիկումում: 1988-90թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1990թ. անդամագրվել է Ղարաբաղյան շարժմանը, կամավորության սկզբունքով զինվորագրվել ՀՀ հատուկ գնդին, որի մարտիկներից է նրա կազմավորման առաջին իսկ օրվանից: Սիսիանի ռազմական միավորումների կազմում մասնակցել է բոլոր մարտական գործողություններին: Նույն թվականին ընտրվել է Սիսիանի քաղաքային խորհրդի պատգամավոր, եղել է շրջանային ընտրական հանձնաժողովի անդամ: 1992 թվականից ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում՝ շարքայինից հասնելով փոխգնդապետի զինվորական կոչման: Սովորել է Մոսկվայի Ֆրունզեի անվան համազորային ակադեմիայում: Սովորել եւ ավարտել է նաեւ Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիան: Ներկայումս պահեստազորի սպա է եւ զբաղվում է տնտեսական գործունեությամբ: ՀՀ նախագահի եւ բարձրաստիճան հրամանատարության կողմից պարգեւատրվել է մի շարք մեդալներով, շքանշաններով ու պատվոգրերով: Ամուսնացած է, ունի երկու զավակ: ՀՅԴ անդամ է 1990 թվականից: 2008թ. հոկտեմբերի 12-ի ՏԻՄ ընտրություններում եղել է Սիսիանի քաղաքապետի թեկնածու եւ ձայների աննշան տարբերությամբ չի ընտրվել համայնքի ղեկավար:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ.

«Սիսիանի քաղաքապետին գոնե այս անգամ պետք է ընտրեն սիսիանցիները, ինչը չհաջողվեց 2008-ին»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Սիսիանի քաղաքապետի թեկնածու Տիգրան Պողոսյանը: 3

ԽՈՍՔ ԸՆՏՐՈՂԻՆ

Դարգելի սիսիանցի

Երկրորդ անգամ եմ առաջադրում իմ թեկնածությունը Սիսիանի քաղաքապետի պաշտոնի համար: Հեշտ չի եղել նման պատասխանատու որոշման ընդունումը, մանավանդ որ լավատեղյակ եմ ընտրական մեխանիզմի աղաղակող թերություններին եւ ընտրությունների հանդեպ՝ մեր հասարակության մի մասի ոչ առողջ վերաբերմունքին: Սակայն վերջին տարիներին մեր քաղաքի կյանքի բոլոր բնագավառներում խորացող բացասական երեւույթները՝ մարդկանց անպաշտպանությունը, աշխատատեղերի բացակայությունը, արագացող արտագաղթը, անբարեկարգ եւ փոշոտ քաղաքում ապրելու անորոշությունը եւ երիտասարդության անապագա վիճակն ինձ համոզում են, եթե կուզեք՝ ստիպում են, ինչ-որ բան անել: Ես զինվորական եմ եւ հասկանում եմ, որ պայքարից հրաժարվել չի կարելի: Ովքեր հոգնում են պայքարից՝ նրանք չեն կարող ապագա կերտել իրենց եւ իրենց զավակների համար: Մյուս կողմից՝ քաղաքապետի պաշտոնում առաջադրվելու որոշումս նաեւ հետեւանք է ձեզանից եկող հորդորի, քաջալերանքի ու աջակցության: Առավել պարտավորեցնում եւ գործի է մղում հանգամանքը, որ ինձ աջակցություն են հայտնում մեր քաղաքացիներից շատերը՝ անցած ՏԻՄ ընտրություններում իմ օգտին չքվեարկած:

Ես էությամբ հեղափոխական եմ եւ հավատում եմ, որ ավելի քան քսան տարի տեւող մեր քաղաքական վարքի անհույս դեգերումներն այս անգամ բացարձակապես այլ՝ նոր որակով են դրսեւորվելու եւ նոր որակ են հաղորդելու մեր կյանքին: Մենք ունենալու ենք բոլորովին այլ քաղաք, բոլորովին այլ մարդկային ու հասարակական հարաբերություններ, եթե ճիշտ կողմնորոշվենք սեպտեմբերի 9-ին: Այդ հեղափոխությունն իրագործելու համար կյանք վտանգող հերոսական քայլերի կարիք չկա, անհրաժեշտ է ընդամենը լինել քաղաքացի, չենթարկվել ինքն իրեն վերարտադրող վարչական մեքենայի ճնշումներին, երկու օր կուշտ սնվելու դիմաց չվաճառել յուրաքանչյուրիս ունեցած ամենաթանկ քաղաքական կապիտալը՝ սեփական քվեն: Մեր ժողովրդի ճնշող մեծամասնությունը հասկանում է, որ իր ապագան վտանգելու տեսակետից քվե վաճառելը մարմնավաճառությունից ծանր մեղք է, որ տարբեր տրամաչափի փողատերերը եւ քաղաքական բախտախնդիրները ժողովրդի համար վճռորոշ ընտրական գործընթացները դիտում են որպես հարստացման հավելյալ աղբյուր՝ մեր ժողովրդին դատապարտելով մի քանի տարվա անհույս գոյության եւս:

Վստահ եմ, որ Սիսիանի հասարակությունն այս ընտրություններին դրսեւորելու է քաղաքացիական բարձր գիտակցություն, եւ յուրաքանչյուր ոք հանդես է գալու որպես Հայաստանի Հանրապետության արժանապատիվ քաղաքացի:

Հաղթելու ենք, կարգ ու կանոն ենք հաստատելու, աշխատելու ենք եւ ապրելու ենք միասին ու մարդավարի:

Ձեր՝
Տիգրան Պողոսյան,
Սիսիանի քաղաքապետի թեկնածու

ՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԸ:

Հաղթելու ենք, կարգուկանոն ենք հաստատելու, աշխատելու եւ ապրելու ենք միասին ու մարդավարի

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■

№ 20 261
24 ՕԳՈՍՏՈՍԻ 2012

ԹՈՂԱՐԿՈՒՄ՝ ՍԻՍԻԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԵՐՈՂՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ

ԽՈՍԱԾ ՍԵԾԱՅԻ ■ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Ճակատը համբուրելի ժողովուրդ է Սիսիանի ժողովուրդը



Համո Սահյան. Նկարի հեղինակ՝ Ալեքսանդր Բաղդասարյան

Սիսիանն արոտավետ սարեր ունի ու ցորենաշատ լեռնահովիտներ: Երկնքի հանը դաշտերիցի բերող ջրեր ունի ու կիրճերի մամռահոտը երկինք տանող արահետներ:

Լեռների գագաթները յոթերորդ երկնքի մեջ են, խարիսխները՝ վիհավոր անտակ կիրճերում:

Տարվա բոլոր եղանակները ապրում են իրար հարեւանությամբ: Օգոստոսիսն (երբ մինչեւ անգամ տարին երաշտ է) կարող ես լեռնագագաթներից դեղապետի ծյուն բերել, հունվարին մանուշակ ու կակաչ քաղել կիրճերի հատակին:

Ցից Քարեր բնակավայրը, որն առընթեր է շրջկենտրոնին՝ Սիսիան քաղաքին, 4-6 հազար տարվա պատմություն ունի: Ամեն անգամ, երբ այդ բնակավայրն եմ մտնում, ինձ թվում է, թե տեսնում եմ նրա բնակիչներին, վիթխարի ժայռաբեկորները ծորից ծորաբերան հանող շինարարներին, տեսնում եմ նրանց, լսում նրանց ծայները, խոսում նրանց հետ նախնական մի լեզվով եւ դառնում նրանց ժամանակակիցը: Երբ դուրս եմ գալիս այնտեղից, ինձ զգում եմ ոչ թե յոթաբաւուն, այլ յոթ հազար տարեկան: Եվ նրանք էլ՝ այդ քաղաքի բնակիչներն ու շինարարները հետս գալիս մտնում են այսօրվա Սիսիան քաղաքի քարտաշների, որմնադիրների եւ ճարտարապետների կերպարների մեջ եւ դառնում են մեր ժամանակակիցները:

Պատմական հուշարձանները շատ են Սիսիանում: ժայռերի գանգախոռոչներում օվարած բերդեր, բլուրների թամբին նստած վանքեր, ժողովրդական հանճարի ուրիշ վկաներ... Եվ Սիսիանն էլ իմ բնաշխարհն է, իմ ծննդավայրը, ամեն քարը իմ հոգու մի բեկորն է, ամեն պտղունց հողը՝ իմ սրտի մի մասունքը: Բոլորն իմ մեջ են, բոլորի մեջ ես են...

Եվ, սակայն, ամենից շատ սիրում եմ Սիսիանի մարդկանց, սիսիանցիներին, մարդիկ, որ օգտվել գիտեն ժամանակակից քաղաքակրթության բոլոր բարիքներից եւ պահպանել գիտեն նախնիների լավագույն սովորույթները: Սիրում եմ նրանց աշխատասիրությունը, տիրոջական զգացումը հողի նկատմամբ, համեստությունը, ամոթխածությունը, պարզամտությունը:

Առուկուլից, առուծախից, առուփախից փախած այդ մարդիկ եթե գլխիդ սպիտակ մազ են տեսել, ոտքի կկանգնեն, եթե նստած են, եթե կանգնած են՝ գլխարկները կիսանեն: Դիրքը այստեղ դեր չունի, որոշողը տարիքն է: Նրանք հացի պատառը գետնին չեն գցի, գետնին հացի պատառ տեսնեն, կառնեն կփշրեն, կդնեն քարին, որ թռչուններն ուտեն: Հացը մեղք է, հացը սուրբ է՝ կասեն:

Աչքերդ առաջ երեսիդ, եթե աղջիկ է, այտերը որդան կարմիր կդառնան, եթե տղա է, կշփոթվի, աչքերը գետնին կխոնարհի, կանցնի: Հետո հետ կդառնա կնայի:

Սիրելի, սիրելի սիսիանցիներ, ինչքան բան ունի այս խառնիխուռեն, այս ամբարտավան ժամանակների մարդը ձեզանից սովորելու: Ձեր չկորցրածը, ձեր պահպանածը նահապետականություն չէ, ծիսական խեղճություն չէ, հետամնացություն չէ, այլ կատարյալ մարդկայնություն, որ մարդուն պետք է գալու ամենուր եւ ամեն օր, քանի կյանքը կա:

Ճակատը համբուրելի ժողովուրդ է Սիսիանի ժողովուրդը: Եվ ես շնորհակալ եմ ճակատագրից, որ այդ ժողովրդի զավակն եմ եւ նրա երազաշատ ապրումների թարգմանաբանությունն եմ:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՈՒՂԵԳԾԻ

Դրույթներ Սիսիանի քաղաքապետի թեկնածու Տիգրան Պողոսյանի նախընտրական ուղեգծից

Սիսիանի առջեւ ծառացած հիմնախնդիրներից հատկապես կարեւոր են զբաղվածության խթանումը, քաղաքի ամբողջական բարեկարգումը, քաղաքում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձեւավորումն ու քաղաքի բնակիչների սոցիալական պաշտպանությունն ու նրանց կենսամակարդակի բարձրացումը: Այդ ամենի հետ մեկտեղ իրականացնել հետեւյալ միջոցառումները՝

- զուլքագրել քաղաքի բոլոր հիմնախնդիրները ու մշակել համայնքի զարգացման հեռանկարային ու քառամյա զարգացման ծրագրեր,
- կրկնապատկել քաղաքի կանաչ տարածքները, համայնքային ջրաղբյուրների հիման վրա կառուցել ներքին ոռոգման նոր համակարգ,
- համայնքում ապահովել գիշերային լուսավորություն, բարեկարգել ներքաղաքային ճանապարհները ու հրապարակները, բարելավել քաղաքի ճարտարապետական տեսքն ու պահպանել Սիսիանի ճարտարապետության հիքնատիպ դիմագիծը,
- Սիսիանի բնական, պատմական եւ մշակութային հնարավորություններն օգտագործել զբոսաշրջության զարգացման նպատակով,
- վերանորոգել բազմաբնակարան շենքերի տանիքներն ու մուտքերը, ամբողջապես մեքենայացնել աղբահանությունը, բարելավել ներքաղաքային ու միջհամայնքային տրանսպորտի գործունեությունը,
- համալիր աջակցություն ցուցաբերել բազմազավակ, երիտասարդ, ինչպես եւ ազատամարտիկների ընտանիքներին՝ բարելավելով նրանց բնակարանային, կրթական, առողջապահական եւ սոցիալական ոլորտին առնչվող մյուս պայմանները,
- մշակել եւ իրականացնել երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպման ամբողջական ծրագիր եւ աջակցություն ցուցաբերել առողջ ապրելակերպի արմատավորմանը,
- վերակառուցել մարզական ու մշակութային օբյեկտները, հսկողություն սահմանել դրանց նպատակային օգտագործման վրա,
- քաղաքային իշխանության լիազորությունների սահմաններում խրախուսել փոքր ու միջին բիզնեսի զարգացումը, գյուղատնտեսության եւ վերամշակող արդյունաբերության ոլորտներում նախաձեռնել նոր՝ արժանապատիվ վարձատրությամբ աշխատատեղերի ստեղծում, խրախուսել կրթության եւ աշխատաշուկայի միջեւ կապը,
- բարձրացնել համայնքային ենթակայության հաստատությունների (գեղարվեստի, երաժշտական, պարարվեստի, շախմատի դպրոցների եւ այլն) աշխատողների աշխատավարձը՝ ապահովելով համարժեքություն հանրակրթության բնագավառի աշխատավարձերի հետ,
- քաղաքապետարանի ծրագրերի իրագործմանն ապահովել հասարակական կազմակերպությունների, մտավորականների եւ հանրության մեջ հարգանք վայելող անձանց մասնակցությունը՝ այդ նպատակով ստեղծելով ամբողջական համակարգ,
- առաջադեմ ուսանողների համար սահմանել Համո Սահյանի եւ Նիկողայոս Ադոնցի անվան հնգական անվանական կրթաթոշակներ:

Մեր նշանաբանն է՝ Սիսիանը մեր տունն է, հարազատ օջախի պես պահենք ու փայփայենք այն:

№ 20 261
24 ՕԳՈՍՏՈՍԻ 2012

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■

Հաղթելու ենք, կարգուկանոն ենք հաստատելու, աշխատելու եւ ապրելու ենք միասին ու մարդավարի

Այսօրվա երկիր

ԹՈՂԱՐԿՈՒՄ՝ ՍԻՍԻԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԵՐՈՂՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ.

«Սիսիանի քաղաքապետին գոնե այս անգամ պետք է ընտրեն սիսիանցիները, ինչը չհաջողվեց 2008-ին»

«Այսօրվա երկրի» հարցերին պատասխանում է Սիսիանի քաղաքապետի թեկնածու Տիգրան Պողոսյանը:

Նախընտրական այս օրերին կրկին սիսիանցիների ուշադրության կենտրոնում Տիգրան Պողոսյանն է: Նա էր, ով 2008թ. հոչակեց հայտնի կարգախոսը՝ «Տեր կանգնել Սիսիանի արժանապատվությանը եւ թույլ չտալ, որ Երեւանում ու Կապանում նստածները որոշեն Սիսիանի քաղաքապետի ով լինելը»: Նա է, որ Սիսիանի՝ այլեւս ամուլ քաղաքական դաշտում սիսիանցիներին (ի շահ Սիսիանի) համախմբելու, միավորելու դրոշ է բարձրացրել եւ դուրս եկել ՀՀԿ-ԲՀԿ առեւտրական (շատ կասկածելի) գործարքի դեմ, որի նպատակն է Երեւանում գրված սցենարով հերթական անգամ Սիսիանին քաղաքապետ պարտադրել, սիսիանցի ընտրողին ծաղրել ու նվաստացնել՝ հանուն մեկ-երկու հոգու անձնական շահի, հանուն մեկ-երկու հոգու անձնական ունեցվածքի պահպանության ստրոգացուցիչ եւ ամոթալի գաղափարի: Արժանապատիվ սիսիանցիների առաջնորդ դարձած Տիգրան Պողոսյանը կարծում է, որ Սիսիանի քաղաքապետ, գոնե այս անգամ, պետք է ընտրեն սիսիանցիները (ինչը չէր հաջողվել 2008-ին), որ Սիսիանը պետք է ունենա ընտրյալ (եւ ոչ թե նշանակված) քաղաքապետ: Նա պատերազմ է հայտարարել ընտրակաշառքին, որը, նրա հավատմամբ՝ վերջին մի քանի ընտրությունների ընթացքում է (դրածոների կողմից) ներմուծվել Սիսիան, դարձել Սիսիանի քաղաքական համակարգի վճռորոշ բաղադրիչը, դարձել դրածո քաղաքապետ ունենալու մեն միակ միջոցն ու երաշխիքը:

– Պարոն Պողոսյան, չորս տարի առաջ դուք առաջադրվեցիք Սիսիանի քաղաքապետի թեկնածու, բայց, ձայների անհշտ տարբերությամբ ու դատական ատյանի միջամտությամբ, չդարձաք Սիսիանի քաղաքապետ: Եվ ահա կրկին առաջադրվել եք: Ինչո՞ւ:

– 2008 թվականին Սիսիանի քաղաքական դաշտը, հանգամանքների բերումով, շատ բարենպաստ եղավ ներկայումս գործող քաղաքապետի համար: Մյուս բոլոր թեկնածուները միացան (բացի Ռազմիկ Դանիելյանից) եւ դուրս եկան իմ դեմ, գործի դրվեցին իշխանական, վարչական ճնշումները: Եվ, ի վերջո, քաղաքապետի հարցը որոշվեց առանց սիսիանցի ընտրողների: Ես դա պարտություն չեմ համարել, ոչ էլ գործողիր շնորհավորել եմ, քանի որ ինքը չէր ընտրվել ու հաղթել: Այնուհետեւ անցած չորս տարին ցույց տվեց, որ ինքը չկարողացավ աշխատել ու համախմբել համայնքի բոլոր ուժերը, լուծել Սիսիանի առջեւ ծառացած խնդիրները, չկարողացավ ի մի բերել եղած ռեսուրսները եւ, գոնե մասնակիորեն, կատարել տված խոստումները: Ի նպաստ Սիսիանի գրեթե ոչինչ չարվեց: Հաշվի առնելով այդ ամենը, գնահատելով Սիսիանի ճախընտրական քաղաքական դաշտում ստեղծված վիճակը եւ վերջին օրերին տեղի ունեցող գործընթացները (որի նպատակն է լուրջ մրցակիցներին ընտրապայքարից դուրս թողնելն ու գործողի հերթական, պրեսեստական հաղթանակի ապահովումը)՝ չէի կարող անտարբեր մնալ: Լինելով սիսիանցի, ապրելով Սիսիանում, իմ կյանքի եւ գործունեության հետագա ընթացքը նույնպես կապելով Սիսիանի հետ՝ ուղղակի հնարավոր չէ կողքից հայեցողի դերում լինել եւ սպասել, թե ինչ է կատարվում քաղաքի հետ:

– Դուք ինչ-որ չափով արդեն ընթացքի՞ցիք Սիսիանի ներքաղաքական կացությունը: Եթե կարելի է՝ մի քիչ ավելի հանգամանալից, որովհետեւ տեղի ունեցող գործընթացները, անկեղծ լինենք, դեռեւս օրեր առաջ պատկերացնել անգամ հնարավոր չէր: Ավելի միշտ՝ չէր կարելի պատկերացնել, որ արժանապատվություն ունեցող Սիսիանը (քանիցս ապացուցված) կփորձեն դարձնել խաղալիք, փոխանակման առարկա, առեւտրի սուբյեկտ, մանրադրամ: Կարող էին չէ՞ որպես մանրադրամ օգտագործել այսուհիցյան մեկ այլ քաղաք, բայց կանգ առան հենց Սիսիանի վրա:

– Եթե նկատի ունեք հանգամանքը, որ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն գործող քաղաքապետով են մասնակցում սեպտեմբերի 9-ի ընտրությանը, ապա դա իճձ չի անհանգստացնում կամ վախեցնում: 2008-ի ընտրությունների եւ այս տարվա մայիսի 6-ի ընտրությունների օրինակով ասեմ՝ «դաբրո» կոչվածը Սիսիանի ընտրողների համար զրո նշանակություն ունի, եւ որոշիչը սիսիանցու բվեն է լինելու: Ինչ վերաբերում է ՀՀԿ-ԲՀԿ՝ այսպես կոչված դաշինքին, ապա այսօր պաշտոնական որեւէ հայտարարություն չկա, բացի ինչոր մասնավոր անձանց (Հանրապետական պաշտոնյաների) ուշացած ակտիվությունից, առայժմ ամեն ինչ ասեկոսեների մակարդակով է: Իսկ ՀՀԿ-ի պաշտոնական խոսքը (այդ կապակցությամբ) շատ կարեւոր ու հետաքրքիր է լինելու (եթե, իհարկե, լինելու է), չէ՞ որ նույն այդ կուսակցությունն էր չորս տարի շարունակ սիսիանցիներին ապացուցում, համոզում, որ Սիսիանի քաղաքապետն իր տեղում է:

– Ամենեւին վատ կարծիք չհայտնելով մյուս թեկնածուների՝ Հրաչ Խաչատրյանի, Մհեր Ազոյանի մասին (որոնց չենք ճանաչում), չենք կարող, սակայն, չարձանագրել, որ նրանց առաջադրմամբ Սիսիանում ճախընտրական իրավիճակը մի փոքր փոխվեց: Քվեները ցաքուցրիվ անելու հեռանկարը, որ անխուսափելի է այդքան թեկնածուների պարագայում, շատ ծեռնտու է գործող քաղաքապետին: Ճի՞շտ է մեր նկատառումը:

– Նշված թեկնածուներից ոչ մեկի հետ նախնական համաձայնություն, պայմանավորվածություն չունեմ: Բայց ես հարգանքով եմ վերաբերվում նրանց առաջադրման փաստին, եւ վստահ ու համոզված եմ, որ առաջիկայում նրանց հետ կքննարկենք ստեղծված վիճակը, ուժերը հանուն Սիսիանի հիմախմբելու խնդիրը եւ կգտնենք ճիշտ ելք:

– Սիսիանում խոսակցություններ են շրջանառվում, թե իբր Ձեր հանդեպ արդեն սկսել են ճնշումները եւ իբր դուք հանելու եք Ձեր թեկնածությունը, որպեսզի գործող իր պաշտոնում վերանշանակվի առանց աղմուկ-աղաղակի:

– Բացառվում է...

– 2008թ. ՏԻՄ ընտրություններում Դուք Սիսիանի ընդդեմ լիդերն էիք, ինչը ցույց տվեցին քվեարկության առաջին եւ երկրորդ փուլերի արդյունքները: Այդ ժամանակվանից, սակայն, տարիներ են անցել՝ չորս տարի: Ի՞նչ փոփոխություն է կրել քաղաքական Ձեր թիմը, համակիրների Ձեր բանակը:

– Իմ թիմը, եթե կարելի է այդպես ասել, մնացել է անփոփոխ, համակիրներս ու աջակիցներս հիմնականում նույնն են մնացել: Ավելացել են գործող քաղաքապետի չորս տարվա աշխատանքի իրական գնահատողները: Ընտրական տեղամասերում ունեմ աջակիցներ (բոլոր տեղամասերում), ովքեր ի վիճակի են պաշտպանելու շահերս, նպաստելու ազատ ու արդար, օրինական ընտրության անցկացմանը: Իմ քաղաքական թիմը պատրաստ է տեր կանգնելու մեր օգտին տրված ամեն մի քվեի: Մենք պատրաստ ենք պաշտպանելու բոլոր այն ընտրողների արժանապատվությունը, ում վրա կփորձեն ճնշում բանեցնել:

– Դուք չե՞ք նկատել (եւ նկատում), որ Ձեր մրցակիցները, ինչպես 2008 թվականին, փորձում են շահարկել Ձեր՝ ՀՅԴ անդամ լինելը՝ այդ հանգամանքը համարելով մեղքի պես մի բան:

– Նախ՝ դրանք անհուսությամբ եւ անօգնականության մեջ հայտնված մարդկանց պարգուկակ տվայտանքներ են, ինչին որեւէ լուրջ մարդ ուշադրություն չի դարձնի: Եվ ՀՅԴ անդամ եմ 1990 թվականից եւ հպարտությամբ եմ անդամակցում քաղաքական այդ ուժին: Մյուս կողմից՝ յուրաքանչյուրն համայնքի ղեկավար իր գործունեության մեջ չի կարող վերկուսակցական լինել, եթե, իհարկե, ինքը նպատակ ունի անկեղծորեն ծառայել տվյալ համայնքի բնակչությանը: Իսկ իմ մտադրություններն անկեղծ են: Համայնքի ղեկավարը բոլոր սիսիանցիների ղեկավարը պետք է լինի, բոլոր սիսիանցիների շահերի արտահայտիչը, ինչը նույնիսկ արձանագրված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՅ օրենքում: Ինձ համար, օրինակ, որեւէ բացատրություն եւ արդարացում չունի իրողությունը, որ համայնքային իշխանությունը համայնքի հարյուրավոր բնակիչների հետ իր հարցերը փորձում է լուծել դատական կարգով: Հայաստանի ոչ մի համայնքում, որքանով տեղյակ եմ, չորս տարվա մեջ այդքան մարդ համայնքային իշխանության կողմից չի ուղարկվել դատարան: Եվ ոչ մի համայնքային իշխանության աշխատակիցներ, մյուս կողմից,այդքան անգամ չեն կանգնել դատական պատասխանատվության առջեւ:

– Դուք Արցախյան գոյամարտի ճանաչված մասնակիցներից եք: Միեւնույն ժամանակ՝ Սիսիանում տարիներ շարունակ եւ այսօր նկատելի ազդեցություն ունի երկրապահի տեղական կառույցը: Հետաքրքիր է՝ Ձեր մարտական ընկերները ինչպե՞ս են վերաբերում Ձեր առաջադրմանը եւ պատրա՞ստ են արդյոք սատարելու Ձեր ընտրությանը:

– Արցախյան պատերազմում ձեւավորված ընկերությունը չի կարող ամենալավն ու ամենաանկեղծը չլինել՝ բոլոր առումներով: Իմ մարտական ընկերները հավանություն են տվել առաջադրմանս, նրանցից յուրաքանչյուրին, ինչպես ինձ, մտահոգում է Սիսիանի ներկա վիճակը, Սիսիանի ապագան: Ինչ վերաբերվում է սատարելուն՝ նրանք միանշանակ ինձ են սատարելու, որքան էլ ոմանք անօգուտ ջանքերով փորձել եւ փորձում են շեղել տղերքի անկեղծ ձգտումը...

– Թե ինչ դեր ունի ընտրակաշառքը մեր ընտրական համակարգում, բոլորս գիտենք: Ցավոք, Սիսիանն էլ, ինչպես ցույց տվեցին նախորդ ընտրությունները, անմասն չէ արատավոր այդ երեւույթից: Չե՞ք վախենում, որ ընտրակաշառք-համաձարակը՝ սիսիանյան իր հստակ մեխանիզմով, կկլանի Ձեր քվեները:

– Հաշվի առնելով սիսիանցու որոշ մասի սոցիալական անմխիթար վիճակը, ընտրակաշառքն իր բացասական հետեւանքները կունենա, բայց ոչ թե քվեի, այլ բարոյականության առումով: Սիսիանցին այսօր, քան երբեւէ, համոզված է, որ ընտրակաշառքով ընտրված քաղաքապետը բացարձակ պարտավորություն չի կրում իր ընտրողների հանդեպ: Իմ նախընտրական բարոզչության հիմնական ուղղությունն ընդդեմ կաշառքի է եւ հանուն մաքուր ընտրության: Ընտրակաշառքը միշտ չէ, որ եղել է Սիսիանում, դա համայնքում ներդրվեց վերջին մի քանի տարվա ընտրությունների ընթացքում: Վստահ եմ, որ սեպտեմբերի 9-ին ընտրակաշառքը Սիսիանում որեւէ նշանակություն չի ունենալու:

– Մեր խմբագրության կողմից Սիսիանում անցկացված հարցախույզը ցույց է տալիս, որ համայնքում ընտրությունների անվան տակ իշխանությունն ձեռք բերելու եւ պահելու՝ մայրաքաղաքում մշակված սցենարը վիրավորանքով են ընդունել արժանապատիվ սիսիանցիները: Շրջանառվում է նաեւ խոսակցություն, թե իբր Սիսիանում պատրաստվում է մտավորականության ու արժանապատիվ քաղաքացիների ներկայացուցչական հավաք, որի նպատակն է Սիսիանի ընտրություններին ուղղված ՀՀԿ-ԲՀԿ-ական դավադրության կանխումը: Ըստ հավաստի տեղեկությունների՝ բազմաթիվ ակտիվ ՀՀԿ-ականներ նույնպես դեմ են արտահայտվում Սիսիանը ԲՀԿ-ին նվիրելու հակաազգային նախաձեռնությանը եւ պատրաստ են սատարելու Ձեզ: Որքանո՞վ են հավաստի

Շարունակությունը՝ էջ 4

Հաղթելու ենք, կարգուկանոն ենք հաստատելու, աշխատելու եւ ապրելու ենք միասին ու մարդավարի

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 20 261
24 ՕԳՈՍՏՈՍԻ 2012

ԹՈՂԱՐԿՈՒՄ՝ ՍԻՍԻԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Երբ Հայաստան են ասում...

Երբ Հայաստան են ասում,
Երկնքի համ ու բույրից,
Աստվածների համբույրից
Հարբում է հողը նորից,
Ու բարդիներն են նազում:

Երբ Հայաստան են ասում,
Նուռը ճչում է քարին,
Սարը կանչում է սարին,
Եվ բողբոջում է բարին,
Եվ ջարիքն է նվազում:

Երբ Հայաստան են ասում,
Քարն արթնանում է քնից,
Միրուխ թռնում է բնից,
Եվ կակաչները բլրից
Դեպի սարերն են վազում:

Երբ Հայաստան են ասում,
Ճաքում է նուռը կրքից,
Քրտնում է վազը դրկից,
Եվ ասպղերը երկնքից
Ականջիդ բան են ասում՝

Երբ Հայաստան են ասում,
Արմատներով զորացած,
Հնության մեջ խորացած,
Նորերի մեջ նորացած
Բերդ ու ոստան են ասում:

ՀԱՍՊՈ ՍԱՀՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ.

«Սիսիանի քաղաքապետին գոնե այս անգամ պետք է ընտրեն սիսիանցիները, ինչը չհաջողվեց 2008-ին»

Սկիզբը՝ էջ 3

այդ խոսակցությունները:

– Սիսիանցին ամեն գնով տեր կկանգնի իր արժանապատվությանը եւ դրա համար, չի բացառվում, կձեռնարկվեն ամենատարբեր բնույթի քայլեր: Եվ 2008թ. հոկտեմբերի 12-ի ՏԻՄ ընտրությունները, եւ այս տարվա մայիսի 6-ի ԱԺ ընտրությունները ցույց տվեցին նորից, որ սիսիանցին իր տեսակով ըմբոստ է ու որեւէ պարագայում չի կարող գործիք դառնալ ինչ-որ ուժերի ձեռքին: Կրկնում եմ՝ սիսիանցին թույլ չի տա, որ իր համայնքի ղեկավարի ով լինելը Երեւանում կամ մեկ այլ տեղ որոշվի:

– Առաջադրվելով քաղաքապետի թեկնածու, ըստ էության, եւ 2008-ին, եւ այսօր Դուք անհամաձայնություն եք հայտնում Սիսիանում իրականացվող քաղաքականության, քաղաքապետարանի գործունեության հետ: Եվ ուրեմն՝ ինչի՞ հետ Դուք համաձայն չեք, թեեւ նախորդ պատասխաններում ինչ-որ չափով արդեն պատասխանել եք այդ հարցին:

– Սիսիանի համայնքի ղեկավարը պետք է ընտրվի համայնքի ընտրողների ազատ, անկաշկանդ, չպարտադրված կամքով. ի դեպ, այդպես պետք է լինի ամեն մի համայնքում, ինչը չհաջողվեց մեզ 2008 թվականին: Հայտնություն արած չեմ լինի, եթե ասեմ, որ Սիսիանը տարեցտարի կորցնում է քաղաքի նկարագիրը, որքան էլ ցավալի է՝ ծերանում է ե՛ւ քաղաքը, ե՛ւ բնակչությունը (երիտասարդության զգալի մասը, ապագա չտեսնելով այստեղ, թողնում ու հեռանում է): Իսկ այս հետընթացը կանգնեցնել հնարավոր է, ինչը չեն անում գործող իշխանությունները: Էլ չեմ խոսում ամենատարբեր մանրուքների մասին, որ կարելի է անել համայնքային ուժերով՝ էլեկտրասյուների ու խաղահրապարակների՝ տասնամյակներով չներկված վիճակ, անմշակ կանաչ գոտիներ եւ այլն: Տարրական թվացող այս օրինակները նույնպես ցույց են տալիս, որ քաղաքի առօրյա հոգսերի հանդեպ չկա սրտացավ վերաբերմունք:

– Սիսիանը, ցավոք, այսօր շատ խնդիրներ ունի: Դրանց մի մասին՝ անդրադարձանք, մի մասին՝ ոչ: Այդուհանդերձ՝ այդ հիմնախնդիրներից որո՞նք են բոլորից շատ Ձեզ մտահոգում:

– Գլխավորը բնակչության եւ հատկապես երիտասարդության զբաղվածության խնդիրն է, ինչն արտացոլված է նաեւ իմ նախընտրական ծրագրում: Այնուհետեւ՝ նախորդ տարիներին Սիսիանում այնպիսի քաղաքականություն է իրականացվել, որ հիմա, անգամ համայնքային գլխավոր հարցերի շուրջ, համագործակցություն եւ միասնություն չկա: Եվ այդպիսի շատ-շատ հիմնախնդիրներ, որոնց լուծումը քաղաքային իշխանությունը գոնե սեպտեմբերի 9-ից հետո պետք է համարի իր առաջնահերթությունը:

– Դուք, նաեւ թերթի այս համարում, խոսք եք հղում սիսիանցի ընտրողին: Ի՞նչ կավելացնեք արդեն ասվածին:

– Գործող քաղաքապետի հետ որեւէ անձնական խնդիր չունեմ, նրա աշխատանքի չորս տարվա ընթացքում նույնիսկ փորձել եմ հնարավորինս աջակցել՝ ի նպաստ Սիսիանի նախաձեռնություններում: Այնպես որ խոսք չի կարող լինել անձնական հարցերի ու հակասությունների մասին: Իմ մղումների, իմ առաջադրման շարժառիթների հիմքում բացառապես Սիսիանի եւ սիսիանցու շահն է, մեր համայնքի վաղվա օրվա հանդեպ մտահոգությունը: Այդ բոլորով հանդերձ, սակայն, դուք եք (խոսքս իմ սիրելի համաքաղաքացիներին եմ ուղղում) գործող քաղաքապետին եւ գնահատողը, եւ նրա հետագա գործունեության հարցը որոշողը: Եթե կարծում եք, որ հենց այսպես էլ պետք է լինի Սիսիանն ու այսպես էլ պետք է աշխատի Սիսիանի քաղաքապետը, կարող եք եւ քվեարկել նրա օգտին, իսկ եթե ոչ, ապա սեպտեմբերի 9-ին ի շահ Սիսիանի օգտագործեք ընտրելու Ձեր իրավունքը:

– Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝ ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: